

Այս առթիւ հետեւեալը դրկուած է մեզ հրատարակելու խնդրանքով. —

Հայ տառերու գիւտին 1500 ամեակին և հայ տպագրութեան 400 ամեակին առթիւ որոշուած ըլլալով համազգային հանդէս մը կատարել, այս առթիւ կարգադիր յանձնախումբ մը կազմուած է, որուն անդամք են. —  
Եղիշէ Արքեպս. Դուրեան, Գէորգ Մ. Վ. Ասլանեան, Կոմիտաս վրդ., Յակոբոս քհնյ. Տէլէճէկեան, Տիկին Ակիւլինէ Պոյաճեան, Տիկին Արչա-կունի Թէոդիկ, Տիկին Եւփիմէ Աւետիսեան, Տիկին Զապէլ Ասատուր, Տիկին Զապէլ Եսայեան, Տիկին Զարունի Գալէմքեարեան, Աստուածատուր էֆ. Խաչատուրեան, Վահան Էսայեան, Վահրամ էֆ. Մարգարեան, Վառժապուն էֆ. Սամուէլեան, Տիգրան էֆ. Չէօկիւրեան, Տքթ. Գառնիկ Կիւլպէնկ, Տքթ. Կարապետ էֆ. Եաղուպեան, Տքթ. Վահրամ էֆ. Թորգոմեան, Տքթ. Քրիսեան, Օննիկ էֆէնտի Արզուման (Տպարանապետ), Արչակ էֆէնտի Շմաւոնեան, Արսէն էֆ. Շմաւոնեան, Բիւզանդ էֆ. Քէչեան, Գառնիկ էֆ. Սարգիսօֆ, Գրիգոր էֆ. Ոսկեան, Եղուարդ էֆ. Գարակէօզեան, Եղուարդ էֆ. Շիրինեան, Թէոդիկ էֆ. Լապճինճեան, Խաչիկ էֆ. Գէորգեան, Հրաչեայ էֆ. Տէր Ներսէսեան, Մինրան էֆ. Գարագաշեան, Մինրգատ էֆ. Հայկազն, Միքայէլ էֆ. Շամտանճեան, Յակոբրտ էֆ. Ճէճիզեան՝ բրօֆէսէօր, Յովհաննէս էֆ. Գարտաշեան, Յովհաննէս էֆ. Թօլաեան, Ներսէս էֆ. Օհանեան, Շահան էֆ. Պէրպէրեան, Պարգեւ էֆ. Փափազեան, Պետրոս էֆ. Հալաճեան, Պիմէն էֆ. Զարդարեան, Պողոս էֆ. Պալենց, Ռուբէն էֆ. Զարդարեան, Սարգիս էֆ. Գօշունեան, Սէրվիչէն էֆէնտի, Սերովբէ էֆ. Պէրպէրեան, Վահան էֆ. Մատթէոսեան.

Յանձնախումբը ի նիստ կը հրաւիրուի Բշ., 30 Սեպտ., կէս օրէն յետոյ ժամը 3.50-4ին, Ղալաթիոյ Խորհրդարանին մէջ:

Հետեւաբար, ստիպողաբար կը հրաւիրեմք զձեզ որ հաճիք որոշեալ ժամուն ներկայ գտնուիլ Ղալաթիոյ Խորհրդարանը և մասնակցիլ Յանձնախումբին աշխատութեանց:

Մնամք աղօթարար  
Պատրիարքական Տեղապահ  
ԳԱՐՐԻԷԼ ԵՊ. ՃԵՎԱ ՀԻՐՃԵԱՆ